ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆԵՎ ԲԱԶՄԱԿԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք սկսում ենք ճանաչել մեզ շրաջպատող աշխարհը այլ մարդկանց հետ կապի միջոցով: Փոխգործունեության մեր առաջին փորձերը իրականանում են ծնողների կամ դաստիարակների հետ, և նրանց հետ անցկացրած ժամանակը հասարակության մեջ վարքի, ճանաչման և հաղորդակցման հմտությունների զարգացման հիմքն են: Տեսողության խանգարումը կամ բացակայությունը, հատկապես եթե ուղեկցվում է զարգացման այլ խանգարումներով, կարող է բացասական ազդեցություն ունենալ սոցիալական փոխգործունեության վրա՝ հատկապես զարգացման վաղ փուլում: Չտեսնող կամ թույլ տեսնող երեխան օգտագործելով լսողությունը, շոշափելիքը կամ մնացորդային տեսողությունը կարող է ստեղծել վստահելի կապ շրջապատի մարդկանց հետ, որն էլ հիմք կհանդիսանա հետագա ուսուցան համար [1]:

Չտեսնող-չլսող երեխայի համար աշխարհը անկանխատեսելի է՝ ի տարբերություն տեսնող երեխայի: Անհրաժեշտ է ստեղծել անվտանգ միջավայր, որտեղ երեխան կարող է ազատ տեղաշարժվել և անհրաժեշտ է նաև երեխային օգնել անվտանգ և ապահով զգալու տվյալ միջավայրում: Քանի որ չտեսնող երեխան արտաքին միջավայրից տեսողական ազդակներ չի ստանում /հատկապես չտեսնող-չլսող/ նրանք կարող են վախենալ, եթե դուք առանց զգուշացնելու մոտենաք նրանց կամ փորձեք տեղափոխել մի տեղից մյուսը:

Բնականոն տեսողություն ունեցող երեխան տեսնելով, որ ծնողները հագնում են վերարկուն և վերցնում են մեքենայի բանալին, կարող են հետևություն անել, որ տանից դուրս գալու ժամանակն է: Չտեսնող-չլսող երեխան չի կարող կանխատեսել այս ամենը և ծնողների մոտենալը կարող է վախեցնել նրանց: Կամ նմանատիպ իրավիճակում երեխան կարող է հետևել, թե ինչպես է իր եղբայրը բաժակով մոտենում սառնարանին, հյութ լցնում և բաժակով մոտենում իրեն: Չտեսնող-չլսող երեխան այս իրավիճակում կվախենա: Շատ կարևոր է միշտ երեխային պատմել,

բացատրել, թե ինչ է տեղի ունենալու հիմա և խոսքը ուղեկցել իմաստավորված ազդանշաններով՝ տակտիլ և առարկայական [1,2]։

Ծանոթացում լեզվին։ Ցանկացած երեխա՝ մինչև հասկանալը և կիրառելը մայրենի լեզվի բառերը, պետք է լսի տասնյակ հազար անգամ։ Ցանկացած երեխա մինչև խոսել սկսելը փորձում է արտահայտել ինչ որ միտք՝ արտաբերելով որոշակի բառ։ Օր.՝ երեխան ձգվում է դեպի սեղանին դրված բաժակով ջուրը և արտաբերում «բու-բու»։ Մայրը հասկանում է ինչ է երեխան փորձում ասել և տալիս է ջուրը։

Եթե երեխան ունի զարգացման բազմակի խանգարում, անհրաժեշտ է նրան ծանոթացնել խոսքի հետ, խոսքին ավելացնելով հավելյալ առարկաներ, պատկերներ, ժեստեր, ռելիեֆային պատկերներ և բրայլյան տեքստ։ Այս համակազմի երեխաների հետ աշխատելիս պետք է կիրառել նրանց ծանոթ հաղորդակցման ձևեր և ընտրել բարդության համապատասխան մակարդակ։

Կարևոր է երեխայի հետ շփման ժամանակ հաշվի առնել երեխայի նախասիրությունը հաղորդակցման թեմա ընտրելիս։ Բազմակի խանգարում ունեցող շատ երեխաների հետաքրքրում է շարժման հետ կապված թեմաները՝ թռիչքներ, ցատկեր, սեղանին թակելը և այլն։ Մեծահասակը տեսնելով, որ երեխան թակում է սեղանին, կարող է սկսել երկխոսություն նրա հետ՝ նույնպես թակելով սեղանին, նույն տեմպով ու ռիթմով։ Որոշ ժամանակ անց մեծահասակը կարող է փոխել տեմպն ու ռիթմը, դադարներ անել՝ սպասելով երեխայի հերթին։ Մեծահասակը չպետք է ղեկավարի։ Հաղորդակցման մեջ նրա դերը փոխադարձ հարգանքի և հավասարության մթնոլորտի ստեղծելն է։

Արդյունավետ հաղորդակցման համար շատ կարևոր է ֆիզիկական հարմարավետությունը և դիրքի ընտրությունը։ Եթե երեխան չի հասկանուն թե որտեղ, ինչ տարածության մեջ է ինքը գտնվում և վախենում է, որ կընկնի, անհնար է նրա ուշադրությունը կենտրոնացնել մեկ այլ բանի վրա։ Պետք է խորհրդակցել երեխայի ֆիզիոտերապևտի հետ և պարզել, թե ինչ դիրքով է երեխային ավելի հարմար տարբեր պարապմունքների ժամանակ։ Օր.՝ Եթե երեխան սայլակի վրա է, մեծահասակը պետք է նստի աթոռին, որպեսզի երեխայի աչքերի մակարդակին լինի, որ երեխան լավ տեսնի զրույցի ժամանակ։ Ամենատարբեր հաղորդակցման այլընտրանքային ձևեր ընտրելիս պետք է վստահ լինել, որ դրանք ներկայացված են երեխային հասանելի ձևով [3]։

Չտեսնող և զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխաներին հաճախ հավելյալ ժամանակ է անհրաժեշտ ստացվող ինֆորմացիան ընկալելու և պատասխան ձևավորելու համար։

Չտեսնող և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաների աշխարհընկալումը մասնատված է, քանի որ նրանց թվում է, որ նրանց շուրջ առարկաներն ու մարդիկ հայտնվում և անհետանում են առանց պատճառի։ Այս երեխաները առարկաների կայունության մասին պատկերացում չեն ունենա, եթե դրանք պարզապես տան նրան և վերցնեն։ Երեխայի մոտ այն հասկացությունը, որ առարկաները շարունակում են գոյություն ունենալ նույնիսկ այն ժամանակ երբ մենք նրանց չենք տեսնում, չենք լսում և ձեռք չենք տալիս, զարգացնելու լավագույն միջոցը, հնարավորություն տալ ուսումնասիրել, թե որտեղ են դրանք պահվում և ինչպես կարելի է գտնել։

Որպեսզի երեխան կարողանա ուսումնասիրել իրեն շրջապատող տարածությունը, այն պետք է հասանելի լինի։ Զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխայի համար բարդ է աշխարհը լիարժեք ուսումնասիրելը։ Առարկաները կարելի է դնել սեղանին, հատակին։ Ավելի ուշ կարելի է ընդլայնել ուսումնասիրվող տարածությունը. առարկաները կախել պատից։

Զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխան պետք է դիտի, լսի, դիպչի, հոտոտի և ուսումնասիրի տարբեր կառուցվածք, մակերևույթ, ձև, չափ ունեցող առարկաներ՝ հիմնավոր գիտելիքների համար։ Լավագույն ուսուցիչը կլինի իրենց սեփական փորձը իրական կյանքում։ Երեխային պետք է տալ, որ շոշափի իրական շուն, ոչ՝ փափուկ խաղալիք։

Անհրաժեշտ է ամեն ինչ ուսուցանել բնական իրավիճակներում, որը երեխան ավելի լավ կյուրացնի։

Հաղորդակցման ձևերը։ Ցանկացած հաղորդակցման ձև, որը կիրառվում է խոսքի և ժեստերի լեզվի հետ համարվում է **հավելյալ**։ Դրանք կարող են լինել առարկաներ, նկարներ, սիմվոլներ, նյութեր, որոնք կարող են տպված լինել բրայլյան տառատեսակով, ինչպես նաև էլեկտրոնային սարքավորումներ։ Որպեսզի հաղորդակցումը լինի իմաստալից և արդյունավետ, անհրաժեշտ է հետևյալ տարրերի առկայությունը.

- հաղորդակցման ցանկություն

- հաղորդակցման թեմաներ
- զրուցակից, ով պատրաստ է լսել և խոսել ձեզ հետ
- հաղորդակցման համապատասխան միջոց

Հաղորդակցման համար առարկաների կիրառումը: Զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել սիմվոլների վերացարկումը.

- ամբողջական առարկաներ
- առարկաների մասեր
- եզրագծեր կամ ուռուցիկ գծեր
- լուսանկարներ կամ ուռուցիկ պատկերներ
- բրայլյան տառատեսակ:

Տակտիլ և առարկայական հուշումներ: Շատ կարևոր է երեխային հաղորդել իրականացվող որևէ բան բանավոր կամ ժեստերի լեզվով, սակայն զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխաներին անհրաժեշտ են լրացուցիչ հուշումներ՝ տակտիլ և առարկայական.

- *Տակտիլ հուշում-* նախապես հպվելով երեխային հուշում ենք հաջորդող գործողությունը: Օր.՝ դիպչելով երեխային ձեռքի ներքևի հատվածին, մենք հասկացնում ենք, որ պատրաստվում ենք բարձրացնել նրան:
- *Առարկայական հուշում-* այս դեպքում արդեն առարկաների միջոցով է կատարվում հուշումը: Օր.՝ առարկայական հուշում կարող է լինել գդալը, բաժակը, հագուստը, բուժական ֆիզկուլտուրայի գնդակը, լողանալու պարագաները և այլն:

Հաղորդակցումը, ճանաչումը և սոցիալական փոխհարաբերությունները աշխարհընկալման հիմքն են: Զարգացման բազմակի խանգարում ունեցող երեխաներին լրացուցիչ օգնություն է անհրաժեշտ, որպեսզի իմաստավոր կերպով մեկնաբանեն իրենց զգացողությունները:

Զգայական ինտեգրացիա: Զգայական ինտեգրացիան կարողություն է ընկալել, դասակարգել, համակարգել սեփական մարմնի և շրջակա աշխարհի մասին ինֆորմացիան: Այս բոլոր առաջադրանքները ավտոմատ կերպով կատարվում են կենտրոնական նյարդային համակարգի միջոցով: Կենտրոնական նյարդային համակարգը ինֆորմացիան ստանում է զգայարանների միջոցով՝ տեսողական,

լսողական շոշափելիք, համ, հոտառություն։ Վերոնշյալ համակարգի մեջ մտնում են քիչ հայտնի ենթահամակարգեր /վեստիբուլյար և պրոպրիոցեպտիվ/ [4]։

Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաներին հատուկ է զգայական ինտեգրացիայի ֆունկցիաների խանգարումները.

- թույլ մկանային տոնուս
- արտաքին ազդակի շարժողական պատասխանի ձևավորման հապաղում
- մանր և խոշոր շարժումների դանդաղ զարգացում
- հավասարակշռություն պահելու անկարողություն
- շոշափելիքի, տակտիլ զգայությունների զարգացման ցածր մակարդակ
- կեցվածքի և քայլքի թերզարգացում
- զգայական ստիմուլների նկատմամբ պաշտպանական ռեակցիա։

Երեխաները, ովքեր դժվար են ընկալում զգայական ինֆորմացիան, դժվարություններ ունեն նաև ուսումնական գործունեության ժամանակ։ Տեսողության և զարգացման բազմակի խանգարումներ ունեցող երեխաներին անհրաժեշտ է լրացուցիչ զարգացնել զգայական ինֆորմացիայի օգտագործման կարողությունը։

Զգայական ինտեգրացիայի զարգացման համար անհրաժեշտ է կիրառել նաև խաղեր և վարժություններ, որոնք ուղղված են երեք հիմնական համակարգերի զարգացմանը. տակտիլ /շոշափելիք/, վեստիբուլյար /հավասարակշռություն/, պրոպրիոցեպտիվ / մկանների և հոդերի շարժման զգացողություն/։

Բացարձակ չտեսնող երեխայի հետ աշխատելիս տակտիլ ստիմուլյացիայի իրականացման ժամանակ և դրանից առաջ, գործողությունները պետք է ուղեկցել խոսքով։

Երեխան պետք է ինքնուրույն կարգավորի վեստիբուլյար համակարգի զարգացմանն ուղղված վարժությունների կատարումը. Օր.՝ ճոճվել կամ պտտվել։

Թերզարգացած պրոպրիոցեպտիվ համակարգ ունեցող երեխաներին հատուկ է ուժեղ կամ հակառակը թույլ ռեակցիան։ Առաջին դեպքում երեխան խուսափում է պարապմունքներից, որոնք ենթադրում են մարմնի մասերի շարժումներ /օր.՝ ֆիզկուլտուրա կամ գիմնաստիկա։ Երկրորդ դեպքում երեխան անընդհատ կձգտի ինքնաստիմուլյացիայի՝ թռչել, ցատկել, ձեռքերը թափահարել, աղմկոտ շարժախաղեր խաղալ։ Այս վարժությունները, որպես կանոն, նյարդային համակարգը հանգստացնող դեր ունեն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Перкинс Школа: руководство по обучению детей с нарушением зрения и множественным нарушениями развития /Методические основы.часть I.-М., 2011. –200 с.
2. Перкинс Школа: руководство по обучению детей с нарушением зрения и множественным нарушениями развития /Расширение функциональных возможностей зрения, пространственной ориентировки и сенсорной интеграции.часть 2.-М., 2012. –200 с.
3. Amaral, I., Ferreira, J. (2011). Communication and Severe Disabilities.In: Van der Valle, Vargancsik, (eds.)Manual : New Skills for Care Workers in Learning Disability Settings.
4. Cawthon, S. (2006). Accommodations and alternate assessment use in schools and programs that serve students who are deaf-blind. Deaf-BlindPerspectives, 14(1), 8-10.

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ ДЕТЕЙ С НАРУШЕНИЯМИ ЗРЕНИЯ И МНОЖЕСТВЕННЫМИ НАРУШЕНИЯМИ РАЗВИТИЯ

С. МУРАДЯН

В статье представлены несколькоспособов и средств организации обучения детей с нарушениями зрения и множественными нарушениями развития.

SPECIFICITIES OF ORGANIZATION OF TEACHING OF CHILDREN WITH VISUAL IMPAIRMENTS AND MULTIPLE DISABILITIES

S.MURADYAN

In the article presents several ways and means of organization of teaching of children with visual impairments and multiple disabilities.